

Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ

(14 փետրվարի 2002 թ.)

«Լոյս ի յայրնութիւն հեթանոսաց,
եւ փառս ժողովրդեան քում՝ Իսրայելի»:
(Ղուկ. Բ 32)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ինչպես մարնանշում է Տոնացոյցը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր փռնախմբում է քառասնորյա Տիրոջ Տաճար գալստյան փոքր: Ղուկաս ավետարանիչը Տիրոջ Տաճար գալուստը հանգամանալից կերպով նկարագրում է և ներկայացնում Քրիստոսի կյանքի այն դրվագը, որը հեղաշարժում ներառնվեց մեր եկեղեցական ծիսա-արարողական կյանքից ներս՝ սրանալով «Տօն քառասնորեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն» անվանումը և կամ, ինչպես Տյառնընդառաջի հեղևողությամբ ժողովուրդն է ասում՝ Տրնդեգ: Նույն փոքր ունեն նաև հույները, ունեն նաև կաթոլիկները: Այս փոքր շեշտադրումը կատարված է Տյառնընդառաջի վրա, այսինքն՝ ընդառաջումի վրա, Տիրոջը ընդառաջ գնալու վրա:

Այժմ, սիրելի հավատացյալներ, քեսնենք, թե Հիսուսի կյանքի այս դրվագը ինչպես է ներկայացնում Ղուկաս ավետարանիչը:

Հրեական ավանդույթի համաձայն, յուրաքանչյուր արու գավակ ունեցող զույգ՝ ծնողներ, պարտավոր էին մանկան ծնվելուց ութ օր հետո կատարել թվապարտությունը, որից հետո քառասունը լրանալուն պես փանել Տաճար՝ կատարելու ընծայման արարողությունը, քանի որ, ավանդույթի համաձայն, փակավին հրեաների Եգիպտոսում գտնվելու շրջնում, յուրաքանչյուր արու գավակ, որն արգանդ էր բացում, ընծայվելու էր Տիրոջ պաշտամունքին: Մակայն հեղաշարժում, երբ Աստուծո փառ մեջ սպասավորություն մատուցելու համար ընտրվեց Իսրայելի փասներկու ցեղերից մեկը՝ Ղևիի ցեղը, մյուս փասնմեկ ցեղերի անդրանիկներն ազապ կացուցվեցին Տիրոջ պաշտամունքին նվիրվելուց, որի համար նրանք արդեն պետք է փրկագին վճարեին իրենց անդրանիկների համար՝ փոխարեն ղևաքցիների: Այս ավանդույթին հետևելով, նաև Հիսուս իր ծնողների կողմից փարվեց Տաճար՝ ընծայումը և մաքրության արարողությունը կատարելու, քանի որ մայրը՝ ծննդաբերած մայրը, Տաճարում պետք է կատարեր նաև մաքրագործման արարողությունը, մաքրագործման ծեսը:

Հովսեփն ու Մարիամը երբ իրենց գավակին վերցրած մուրք գործեցին Տաճար, այնպեղ նրանց դիմավորեցին Միմեոն ծերունի անունով մեկը և Աննա մարգարետուհին, ինչպես որ գրված է Ավետարանում:

Միմեռնի մասին հստակ, որոշակի ընդգծում չկա, որ նա քահանա է, սակայն, բնականաբար, Տաճարում գրավելու պարագան, ինչպես նաև Աստվածաշնչին, Հին Կրակարանին, Մեսիայի գալստյանը ծանոթ լինելու, սպասումով լցված լինելու այդ գալուստի նկատմամբ պարագան հուշում է, որ նա ոչ միայն քահանա էր, այլև օրենսգետ և քաջագիտակ այն բոլոր մարգարեություններին, որոնք վերաբերում էին Քրիստոսի գալստյանը:

Նմանօրինակ սպասումով էր լցված նաև Աննա մարգարեուհին, և այս ընդառաջումից, Տիրոջը դեպի Տաճար առաջնորդելուց հետո, Միմեռն մարգարեն արտասանում է իր հոգակալոր ու հայտնի խոսքերը. «Արդ, արձակիր ինձ, ով Տեր, որովհետև իմ աչքերը փնտան այն փրկությունը, որ Դու նախապարաստում ես Քո ժողովրդի համար»: Նույն հոգևոր բերկրանքով է դիմավորում Տիրոջը՝ Փրկչին, նաև Աննա մարգարեուհին, և Փրկչի ծնողները, ինչպես ներկայացնում է Ավետարանիչը, զարմացած էին, թե ինչպիսի խոսքերով են դիմում իրենց զավակին, որովհետև փակավին նրանց համար էլ հասու չէր իրենց զավակի ով լինելու պարագան:

Հիմնականում, սիրելի հավաքացյալներ, այս է ավետարանական այն դրվագը, որը հետագայում Եկեղեցում դարձել է Տյառնընդառաջի փոքր, և որին առնչված են, աղերսված են, որի շուրջ հյուսվել են գեղեցիկ ժողովրդական ավանդություններ և սովորություններ: Այսպեղ, ավետարանական այս դրվագի մեջ, Տիրոջը ընդառաջ ելնելու այս պատկերի մեջ ինձ համար հարկապես ընդգծելի և շեշտելի են երկու պարագաներ, այն, որ Աստված պիտի Տաճար գնար՝ ենթարկվելով հրեական ավանդույթներին: Սա միանշանակորեն շեշտում է այն, որ Քրիստոս ինքը չուզեց խաթարել հրեական օրենքները, այլ ինքը մտնելով օրենքի փակ, ուզեց ցույց տալ, ընդգծել, որ յուրաքանչյուր ոք, որ օրենքի փակ է, չի նշանակում բնավ, թե օրենքը չկարարելու, օրենքից խույս փախու հնարավորություն և առիթն ունի: Յուրաքանչյուր քրիստոնյայի, յուրաքանչյուր մարդու համար, սակայն, առավել ուսանելի է Միմեռնի և Աննա մարգարեուհու վարքագիծը: Որն է այն և որն է նրանց նկարագիրը, նրանց բնութագիրը:

Առաջին՝ որ նրանք սպասումով էին լցված Քրիստոսի գալստյան նկատմամբ, ըսպասում, որը ես ուզում եմ կոչել սրբազան սպասում, որովհետև նրանք չէին սպասում որևէ այլ բանի, քան միայն Քրիստոսի գալստյան: Երկրորդը, որ ուզում եմ ընդգծել իրենց վարքագծի մեջ, նրանց լավատեսությունն էր, վստահությունը և փրկությանը միջամտիս լինելու, փրկությանը հասնելու նրանց վճռականությունը:

Այսօր, սիրելի հավաքացյալներ, ընդհանրապես մարդկությունը սպասումի մեջ է, յուրաքանչյուր անձ սպասում է և մեզանից յուրաքանչյուրն է սպասում: Հրեաները սպասում էին Մեսիայի գալստյանը, որ իրենց պիտի փրկեր, որ իրենց պիտի շնորհեր համաշխարհային փրկապետություն: Ընչազուրկը սպասում է ավելի բարձր մի կյանք ժառանգելու, զրկվածը սպասում է՝ երբ պիտի վերականգնվեն իր իրավունքները, և բոլոր նրանք, ովքեր վշտացած են, սպասում են, թե երբ պիտի սփռվեն, և այդ սպասումներով համակված ենք մենք ամենքս նաև: Նարեկացու բնորոշմամբ՝

երբ ձիավոր ենք փնտնում, սպասում ենք, թե հենց մեզ լուր պիտի փա, և այդ սպասումը մեր ժողովրդի մեջ, մեզանից յուրաքանչյուրի մեջ առկա է նաև այսօր:

Մենք, վերջապես, սպասում ենք, թե երբ պիտի փասնամյա կյանք ունեցող երիտասարդ մեր պետությունը վերջապես դուրս գա խանձարուրից և մեզ առաջնորդի դեպի ավելի լուսավոր մի ապագա, և այդ սպասումը մեր մեջ ծնունդ է առել դարերի հոլովությունից, և մենք այդ ձայնը բարձրացնում ենք՝ նաև մեր հայրերի սրտի միջից քաղելով:

Տակավին 16-17-րդ դարերում մեր պատմիչներից մեկը, լցված լավ մի կյանք ժառանգելու սպասումով, ասում է. «Ամբողջ աշխարհը խաղաղության մեջ է գտնվում, և արդ, մենք արյան ծովի և սովի մեջ կտրորվում ենք», և սա ոչ այլ ինչ է, եթե ոչ նույն սպասումի, լավ ու բարձր մի կյանք ժառանգելու ակնկալություն և սպասում:

Երկրորդ պարագան, որ ընդգծեցի Միմեոն ծերունու և Աննա մարգարեուհու կերպարի մեջ, նրանց փրկությանը հասնելու ճիգն էր, վճռականությունն էր: Ինչպես Ավետարանում է ասվում Երկնքի Արքայության համար՝ «Բռունք յսփշտակեն զնա» (Մաթթ. ԺԱ 12):

Այո, եթե մեր ժողովրդի մեջ այսօրվա գործածական բառերից մեկն ընտրենք, ճիշտ պիտի ասենք իրապես, որ այն անձերն են հափշտակում, այն անձերն են հասնում Երկնքի Արքայության, որոնք զոռքայություն են դրսևորում այդ փրկությանը հասնելու, որովհետև Միմեոն ծերունին և Աննան չկանգնեցին պասիվ և սպասեցին, թե երբ պիտի փրկությունը գա իրենց այդ փրկության մեջ ներառելու համար: Նրանք ընդառաջ գնացին այդ փրկությանը, և յուրաքանչյուր ոք, ով որ ի վիճակի կլինի, կարող կլինի այդ փրկությանը հասնելու և ճաշակելու այդ փրկության քաղցր պտուղները, երկինքը ընդառաջ կգնա այդ փրկությանը: Եվ նրանք, ովքեր որ ունեն այդ վստահությունը, ունեն այդ վճռականությունը չընկրկելու, այլ վստահությամբ, մերկ ձեռքով մեխի ծայրին հարվածելու, նրանք պիտի հասնեն փրկության:

Այսօր, այս դժվարությունների մեջ, մեր ժողովրդի համար սպասումներով, բարի սպասումներով լեցուն այս ժամանակաշրջանում մեզանից յուրաքանչյուրին անհրաժեշտ է այդ սպասումը, մեզանից յուրաքանչյուրին անհրաժեշտ է փրկությանը հասնելու այդ վճռականությունը, որովհետև փրկությունը մեզանից յոթ սարեր այն կողմ չէ, փրկությունը մեր մեջ է և, պարզապես, պետք է որ մենք ձեռքներս մեկնենք դեպի փրկությունը, քանզի փրկության ձեռքը և փրկչի ձեռքը մշտապես մեկնված է դեպի մեզ, և միգուցե այդ փրկությանը ընդառաջ գնալու մեր պատրաստակամության մեջ ես վստահ եմ, որ առաջիկային մեզանից ամեն մեկը, որպես մեր ժողովրդի արժանավոր ներկայացուցիչ, մեր Եկեղեցու հավաքավոր ու բարեպաշտ անդամ պիտի Միմեոն ծերունու նման բաց ճակատով կանգնի հրաշակերտ այս կոթողներից մեկի, մեր եկեղեցիներից մեկի մեջ և բացականչի. «Լույս ի հայտնություն հեթանոսաց և ի փառս փառն Հայաստանյան, ի սփյուռս աշխարհի սփռված հայության, այժմ և հավիտյանս. ամեն»: